ԵՐԵՄԻԱ ՉԵԼԵՊԻ ՔԵՈՄՈՒՐՃՅԱՆԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՔԱՐՏԵԶԸ

ԳԱԲՐԻԵԼԼԱ ՈՒԼՈՒՀՈՃՅԱՆ (Բոլոնիա)

1933 թ. Ներսես Ակինյանը Երեմիա Չելեպի Քեոմուրճյանի կյանքին ու գրական գործունեությանը նվիրված ուսումնասիրության մեջ նրա գործերի շարքում հիշատակում է նաև մի «Աշխարհագրություն» և գրում, թե իր ունեցած տեղեկությունները անուղղակի են և գալիս են ուրիշների աշխատություններից[1]։ Իր խոսքը ավարտում է ասելով, որ թեև շատ է փնտրել Ավստրիայի դիվաններում ու դրադարաններում, սակայն չի կարողացել գտնել այն։

1991 թ. Դ. Բամպուքչյանը «Պատմություն հրակիզման Կոստանդնուպոլսո (1660 տարվո)» հրատարակության առաջաբանում Քեոմուրճյանի «անհետացած գործեր»-ի ցանկում գնում է «Աշխարհագրութիւն»-ը[2]։

Վերջերս Բոլոնիայի «Համալսարանական» կոչված գրադարանում հայտնաբերվեց Երեմիա Չելեպի Քեոմուրճյանի հեղինակած աշխարհագրական տեղերի գրային նկարագրություն-քարտեզը։ Այն պահպանվել է զանազան վավերագրերի հավաքածուի մեջ, որը հայտնի է իր հիմնադրի՝ Լուդովիկո Ֆերդինանդո Մարսիլի (1658—1730) անունով։ Վերջինս մի հռչակավոր բոլոնիացի ազնվական էր, բազմազան հետաքրքրություններով՝ հատկապես դիվանագիտական ու ռազմական արվեստների նկատմամբ։ Հազիվ 20 տարեկան նա Վենետիկի դեսպանի հետ գնացել է Կ. Պոլիս, որտեղ մնացել է մոտ մեկ տարի (1679—1680)։ Իտալիա վերադառնալուց հետո նա բարձր պաշտոններ է վարել Հռոմի Պապի մոտ, մասնակցել է Թուրքիայի դեմ Հարբսբուրգների մղած պատերազմին և գերի ընկել։ Ազատվելով թուրքական գերությունից հրամանատարի աստիճանով շարունակել է մասնակցել պատերազմներին բալկանյան երկրներում։

1691 թ. Մարսիլին կրկին դնացել է Կ. Պոլիս, այս անգամ կայսեր կողմից կիսապաշտոնական առաքելությամբ՝ կայսրության և Թուրքիայի միջև դինադադար կնքելու։

Կյանքի վերջին տարիներին վերադարձել է Բոլոնիա և նվիրվել զանազան գիտական հետազոտությունների, որոնք երիտասարդ տարիներից դրավել էին իր ուշադրությունը, ինչպիսիք էին ծովի հոսանքների ուսումնասիրությունը, քարաեղագիտությունը, ռազմագիտությունը և այլն։ Բոլոնիայում նա հիմնադրեց և կազմակերպեց Ճշգրիտ գիտությունների ակադեմիան, որը նրա մահվանից հետո ժառանգեց նրա կողմից հավաքված բոլոր նյութերը։ Այս թղթերի մեջ է, որ գտնվում է այն քարտեզ-նկարագրությունը, որը և ներկայացվում է ստորև։ Քարտեզի ձևով կազմված, այն 358 սմ երկարությամբ և 120 սմ լայնությամբ կտավի վրա սոսնձով փակցված թուղթ է, որի վրա տարբեր գույների օգտագործումով պատկերված են ջրաներկով գրված հարյուրավոր աշխարհագրական անուններ և հայոց հոգևոր կենտրոնների պատկերներ, որոնք ուղեկցվում են համառոտ գրություններով։

Արդյո՞ք հնարավոր է սույն քարտեզը նույնացնել Երեմիա Չելեպու անհետացած Աշխարհագրության հետ։ Քարտեզում կա մի երկար հիշատակա-

---

1 Ն. Ակինյան. Երեմիա Չելեպի Քեոմուրճյան. Կյանքն և գործունեությունը. Վիեննա, 1933։

2 Դ. Բամպուրճյան. Պատմություն հրակիզման Կոստանդնուպոլսո (1660 տարվո). Սմիրնա, 1991։

բան, որը կարևոր տեղեկություններ է պարունակում։ Նախ արձանագրվում է, որ այն կազմված է «Զեռամբ կոստանդնուպոլսեցի Երեմիայի եւ պատկերահանի որդեկի իմոյ տէր Մաղաքիայիս։ Այնուհետև հիշատակարանում նշվում է, որ «այս եղեւ պատճառ սոյն խարդայի. ի թվին 1691 եկն աստ Լոտովիկ Ֆերտինանդ Մարսիլի. եւ եղեւ ի խնդիր հայկաղունեաց աշխարհիս վանորէից. վասն որոյ եւ ըստ կարողութեան մերոյ յուսալով ի շնորհս փրկչին մերոյ եւ նորին հաճոյացելոց մաղթանօք օգնութեան. լցաք այսքան զփափաք սրտի նորա։ Եւ զրեցաք զյիշատակութիւն նորին խնդրոյ յաղագս յազգ. ի պատիւ բարեսէր իմաստախնդիր խոհեմութեան նորա»։

Քարտեզի մեկնաբանության և նրա նշանակության ճիշտ ըմբռնման համար դարձյալ մեզ օգնում է հեղինակը, որ աշխարհական ու վարչական ստորաբաժանումների և ապա կրոնաեկեղեցական տարբեր տեսակ հիմնարկությունների մասին գրում է.

«Եւ արդ, ի խարդայս ցուցցի. այն որ մին թուղով է, պարոնի քաղաք է՝ գաւառաւն. եւ որ երկու թուղով է՝ փաշայ կոչի, եւ որ երեք թուղով է՝ պէկլէրպէկի կոչի։ Եւ որք քաղաք են եպիսկոպոսութեան՝ նա յայտնի է, զի է մօտ նորա վանք, ուր նստի եպիսկոպոս նահանդին եւ ուր գաւառ ոչ գոյ. վանք. նա նստի ի քաղաքի, որպէս Եստիրնէ եւ ի Ստանպոլ եւ ի Պուրսա եւ յԻզմիր եւ ի Թոխաթ եւ յայլս, եւ ուր նահատակութեան տեղիք են կամ գերեզմանք սրբոց, զայն ոսկւով նշանակեցի. եւ զանապատսն ճգնաւորաց ձիթենեաց ոստովք ցուցի եւ զկուսանաց անապատսն ուրմաւենեաց ոստովք ցուցի եւ զՍրսայ, այսինքն՝ Կիլիկոյ կաթողիկոսին վիճակս նեֆթի ցուցի եւ զԱղթամարայ՝ կապոյտ ցուցի, վասն ծովուն Վանայ. եւ զԳանձասարայն՝ դեղնագոյն, վասն տարոշութեան նշանակեցի. եւ զէջմիածնին թեմի վանորայսն եւ զեպիսկոպոսութիւնս կարմրագոյն որպէս երկայնատարաղ ձգեցի. եւ զի գիտելի է Գանձասարայն ինքն Լուսաւորիչն զթոռն իւր զԳրիգորիս հաստատեաց կաթողիկոս եւ կայ մինչեւ ցայսօր. եւ Աղթամարն մնաց եւ Կիլիկոյն. վասն օսմանցոց թագաւորութեան ուժոյ բռնացեալ անհնազանդ գտան եւ ինքնագլուխք բուն աթոռն հայոց է՝ սուրբ Լուսաւորչին մերոյ, զոր ինքն շինեաց...»։

Հիշատակարանը ավարտվում է սովորական մաղթանքներով.

«Արդ յիշեսցի ի ձէնջ վերոյգրեալ պատուամեծար պարոն Լոտովիկ Ֆէրտինանդ Մարսիլի ի սուրբ յաղօթս ձեր, որ ի յայտ բերելոյ պատճառ եղեւ իդիս գործառնութեան»։

Սույն հիշատակարանը, ինչպես տեսանք, բավականին տեղեկացնում է քարտեզի էության մասին և հեղինակը, անշուշտ, Երեմիա Չելեպի Քեոմուրճյանն է, որը քաջածանոթ էր Պոլսում XVII դարի երկրորդ կեսին իր բազմակողմանի կրթությամբ ու հետաքրքրություններով, իր լայնատարած հարաբերություններով։

Ուշագրավ է Մարսիլիի և Քեոմուրճյանի հանդիպման փաստը։ Կարևոր է վերոհիշյալ տվյալները լրացնել այլ աղբյուրների տեղեկություններով, որոնք լուսաբանեին այս երկու բացառիկ անձնավորությունների հանդիպման հանգամանքները։ Այս նպատակով բավական շատ պոպտումներ ենք կատարել Մարսիլիի հավաքածուի թղթերում, և չնայած որ նա բազմիցս հիշատակում է հայերին, նրանց եկեղեցական կազմակերպությունը, նրանց բարքերը և նույնիսկ ցույց է տալիս, որ հանդիպումներ է ունեցել Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի հետ դեռևս 1680 թ.[3], սակայն դեռևս որևէ տեղեկություն չի գտնվել, որ վկայեր Պոլսում Մարսիլիի և Քեոմուրճյանի հանդիպումների մասին։ Երեմիա Չելեպի Քեոմուրճյանի՝ Վենետիկի Մխիթարյանների դիվանում պահվող թղթերի հավաքածուի մեջ հայտնաբերվեց մի ինքնագիր վա-

[3] G. Uluhogian. Luigi Ferdinando Marsili e il Catolicos armeno Yakob IV Jugacci,—In „Ad Limina Italiae" (a cura di B. Zekiyan), Venezia, 1996, pp. 199—213.

վերադիր, որտեղ ևս Քեոմուրճյանը գրում է քարտեզի ստեղծագործման առիթի մասին։ Կրկնելով մասամբ այն, ինչ որ մեջ արդեն ծանոթ է, նա գրում է. «Ի թախանձանաց յոլովից դեսպանին Այամանաց կայսեր ո՞ր աղգաւ էր, ես անտեղեակ մնացի, յետ այլ եւ այլ խնդրուածոց, որք առ մեզ գտան, նախ պահանջեաց դիարգա Անատոլու եւ զՊարսից եւ զՀնդկաց, զորս երեք փերթ խարդա արարի՝ յուսալով յանկեղջ պարգևս մարդասիրին։ ...ստիպեաց դմեզ զԱնատոլոյ ամէն մի պէկլէրպէկեաց սանճաղովք զքաղաքսն ցուցանել. եւ զառ ի նոսա իւրաքանչիւրոցն պէկլէրպէկութեան սահմանսն որոշել, այսինքն յորս նստին յանուանի քաղաքս Գ (3) թուղով պէկլէրպէկի կոչմամբ, եւ որ Բ(2) թուղով փաշայ, եւ որ մին թուղով պէկ ի ստորեւ նոցա, ...իսկ յետ որոյ խնդրէր ի մէնջ գաղգիս Հայոց, թէ ուր ուրէք գոն մենաստանք եւ անապատք եւ եպիսկոպոսութեան վիճակք եւ ուխտատեղք հանդիսադրութեանց նահատակաց»։

Այս դրության մեջ կա նաև հետաքրքրաշարժ մի ակնարկ իր տարած աշխատանքի դժվարության մասին. «Եւ զիտելի է ըստ այսմ, զի աշխատանացս պատճառն այն եղև. Ա(1), զի ոչ էի տեսեալ զսահմանս վանորէից, թէպէտ զանուանսն լսէի, Բ(2)՝ զորոց յորոց հարցանէի՝ ոչ կտրէին պարզապէս ցուցանել զսահմանսն. Գ(3), զի զձախ եւ զյաջ ոչ կարէին սահմանել, քանզի ոչ կտրէին նշմարել զաշխարհացն զարևելս եւ զարևմուտս, զհիւսիս եւ զհարաւ, վասն որոյ քրտունք կոխէր զիս»։

Ի՞նչ կարելի է ասել իբրև եզրակացություն.

Ա. Կարելի է զրական պատասխան տալ Քարտեզի հեղինակի ինքնության հարցին, առանց տարակուսանքի վերագրելով այն Քեոմուրճյանի գրչին։

Բ. Երեմիա Չելեպի Քեոմուրճյանը կատարել է մի եղակի գործ՝ ի մի բերելով աշխարհագրական տվյալները և սրանց հետ սերտորեն կապված պատմական իրադարձությունների հիշատակումները, որոնք էական են հայ ուղղի պատմության ու զոյության համար։

Գ. Նրա Քարտեզը մնում է իբրև բացառիկ արժեք ունեցող մի վավերաթուղթ, որ ցույց է տալիս ոչ միայն հեղինակի լայնատարած գիտելիքները, այլև XVII դարի վերջերի հայոց եկեղեցու և հայոց աշխարհի կացությունը, երբ այն ենթարկված էր երկու խոշոր պետությունների՝ Պարսկաստանին և Օսմանյան կայսրությանը։

Դ. Քարտեզում նշված են մոտ ութ հարյուր սրբավայրեր՝ սկսած Գանձասարի կաթողիկոսության տարածքից մինչև Սսի կաթողիկոսության տարածք, ընդգրկելով ինչպես Էջմիածնի և Աղթամարի կաթողիկոսության տիրույթները, այնպես էլ Երուսաղեմը իր շրջակայքով։ Այսպիսով ներկայացված է մի հսկայական տարածք, որտեղ այն ժամանակ ապրում և գործում էին հայերը։

Կան, սակայն, բաղում հարցեր, որոնք դեռևս սպասում են իրենց պատասխանին և ուսումնասիրության շարունակությունը հավանաբար կպարզի նորանոր ծալքեր հումանիստական գործունեության այս հետաքրքիր փաստի մասին։

Եվ վերջապես, մնում է նկարչի անձնավորության հարցը ևս։ Քեոմուրճյանը ասում է, որ Քարտեղը դարձրվել է «ձեռամբ ...պատկերահանի որդեկի իմոյ տէր Մաղաքիայի»։ Քեոմուրճյանի որդի Մաղաքիային է վերագրվել նաև Մատենադարանի № 349 ձեռագիր Աստվածաշնչի փառավոր մանրանկարչությունը։ Բոլոնիայի և Մատենադարանի ձեռագրերը, սակայն, որոնք վերագրված են միևնույն հեղինակ Մաղաքիային, ոչ մի ոճական նմանություն չունեն։ Հետևաբար հարկավոր է խորացնել արվեստագիտական քննությունը ևս և նոր փաստերի հիմքի վրա լուծել, թե քանի՞ Մաղաքիա են եղել և ո՞րն է Մաղաքիա Քեոմուրճյանի ստեղծագործությունը։

НОВОНАЙДЕННАЯ КАРТА ЕРЕМИИ ЧЕЛЕПИ КЕОМУРДЖЯНА

ГАБРИЭЛЛА УЛУОДЖЯН (Болония)

Резюме

В библиотеке университета Болонии (Италия) в фондах Л. Ф. Марсили (1658—1730) в последнее время была найдена карта Армении на армянском языке (358 см × 120 см). На основе колофона установлено авторство карты. Им был Еремия Челепи Кеомурджян, видный армянский ученый второй половины XVII века, живший в Константинополе. В колофоне отмечается, что карта была составлена по просьбе Людовико Фердинандо Марсили, который был в Константинополе в 1679—80 и 1691 годах. Устанавливается, что карта была составлена именно в 1791 году.